

Ռ. Բ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԵՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՐՎԻՆի ԶՄՐ

Դարվինի 1859 թվին լույս տեսած «Տեսակների ծագում» գլամիկ աշխատությունը բիոլոգիայի մեջ առաջ բերեց մեծ հեղաշրջում՝ վերանայվեցին հին դրույթները, ապա վերջնականացես հաստատվեց օրդանական աշխարհի ազգակցական էվոլուցիայի սկզբունքը:

Անգլիայից դարվինիզմ անցավ Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ռուսաստան և ուրիշ երկրներ, որտեղ սկսեց աստիճանաբար աիրապետող զիրքեր գրավել, ազգել բիոլոգիական և այլ գիտությունների վրա, արմատախիլ անել հնացած հակաէվոլուցիոն դրույթները:

Բոլոր կուլտուրական աղջություններն էլ արձագանքեցին դարվինիզմին: Հանուն նոր գարաշրջան բացող ուսմունքի դուրս եկան պայքարի ոչ միայն մասնագետ-բնագետները, այլև ուրիշ քնարզավորի գիտնականներ, հասարակական գործիչները: Առանձին գրքերով, գրքույկներով, ապա և պարբերական մամուլում լույս տեսան բաղմաթիվ ակնարկներ, ստվար աշխատություններ:

Հայերն էլ՝ թե ոռուսակայերը և թե մանավանդ արևմտահայերը ետ չմնացին եվրոպական աղջություններից, չսայած այն բանի, որ նրանք շատ քիչ մասնագետ բնագետներ, առավել քիչ՝ բիոլոգներ ունեին: Սերտ կազ ունենալով մի կողմից Ռուսաստանի հետ (ոռուսակայերը), մյուս կողմից՝ Եվրոպայի հետ (արևմտահայերը), համարյա չունենալով մասնագիտական բնագիտական ժուռնալներ, հայերը այսուամենայնիվ լայն չափով օգտագործեցին եղած պարբերական մասուլը դարվինիզմի դրույթները լուսաբանելու համար: Դարվինից առաջ էլ առհասարակ էվոլուցիոն ուսմունքի հիմնական դրույթն արտացոլված էր հայկական մամուլում:

Դարվինիզմի մասին գրում էին և կողմնակիցները, և հակառակորդները: Շատ հետաքրքրական է, որ հայերի մեջ դար-

վինիդմի մասին ավելի շատ և ավելի ընդարձակ անցյալում գրել են յուրահատուկ կրօնավոր բնագետները — Վենետիկի Մխիթարյանները:

Մխիթարյանների կատարած դերը գիտության տարածման գործում շատ մեծ է, պահանջական արժեքավոր չէ այն ժրաջան աշխատանքը, որ կատարել են միմիթարյան բնագետները բնադիտության տարրեր ճյուղերի վերաբերյալ կազմելով ձեռնարկներ, հրատարակելով մոնողրաֆիկ աշխատություններ (օրինակ՝ Ալիշանի «Հայրուսակ»-ը, Երեմյանի բնագիտական էնցիկլոպեդիան և այլն): 1843 թվից Վենետիկի Մխիթարյան միարանության պաշտոնական օրգան «Բազմավիճակ»-ը բազմաթիվ տարիներ, մանավանդ սկզբնական շրջանում, համարյա յուրաքանչյուր համարում զետեղում էր կենդանաբանական, սակագ չափով բուսաբանական, քիմիական և այլ հետաքրքրական ակնարկներ:

«Բազմավիճակ»-ի երկրորդ շրջանում, 19-րդ դարի վերջերին վանական բնագետներն առանձնահատուկ ուշադրություն են դարձնում բնագիտության, բիոլոգիայի սկզբունքային փիլիսոփայական հարցերի վրա Նրանց մասնավորապես հետաքրքրում էր դարվինիզմը և վերջինիս հետ կապված պրոբլեմները: Ճիշտ է, նրանք այդ պրոբլեմները քննարկում են իդեալիստական-կրոնական դիրքերից, բայց և այնպես նրանց մոտեցումը հիշյալ պրոբլեմներին խիստ տարբերվում է խավարամիտ ռեակցիոն կրոնականների դիրքավորումից: Ամենից առաջ մխիթարյան բնագետներն աչքի են ընկնում իրենց մասնագիտական բնագիտական էլուղիայով, խնդրին մտանում են լուրջ, հարցերը լուսաբանում մանրամասն, լայն չափով օգտագործում են արևմտայան ականավոր բնագետների աշխատությունները, նյութը տալիս են ընթերցողին բազմաթիվ փաստական տվյալներով հագեցած: Կարդալով մխիթարյան բնագետների զրածը դարվինիզմի մասին՝ ընթերցողը համարյա լրիվ գաղափար է կազմում այդ ուսմունքի էության մասին: Որոշ հարցերը այնպիսի մանրամասնություններով են քննության առնում, որոնց մասին ուրիշ հայ բնագետները կամ զրել են շատ կցկուր ու թիրի, կամ նույնիսկ բոլորովին չեն առծարծել:

Ահա թե ինչու, երբ մենք ուսումնակրում ենք բիոլոգիայի պատմությունը և ցանկանում ենք պարզել նաև հայերի դերը բիոլոգիական մտքի զարգացման, տարածման, ժողովրդականաց-

ման գործում, մենք չենք կարող անուշադրության մատնել միխ-
թարյանների կատարած պրոդրեսիվ դերը:

Պետք է նշել, որ դարվինիզմի մասին անցյալում ամենից
շատ և ամենից ընդարձակ գրել են Վենետիկի Մխիթարյաննե-
րը, որոնց մեջ աչքի են ընկնում մանավանդ Սիրունյանը, Երե-
մյանը և Սարյանը:

Սիրունյանը գրել է «Միջին ընթացք իմաստասիրության»
աստվածաբանական փիլիսոփայության սավար գիրքը, որի
գլուխներից մի քանիսը նվիրել է «Տարվինականության» և դրա
հետ կապված «մարդու ծագման»: Երեմյանը կազմել է մի մեծ
հատոր «Բառզիրք գրճական գիտությանց» (Վենետիկ, 1900):
զա մի գիտական էնցիկլոպեդիա է, որի մեջ կա մի ընդարձակ
(15 էջ) ակնարկ «Evolution—Բարեհը ջունն» վերնագրով և որը
հետագայում հրատարակվեց իրեն առանձին գրքույլ՝ «Տարվի-
նականություն» վերնագրով:

Սարյանը «Բազմավեպառում ղետեղել է մի շարք բնագի-
տական հոգվածներ, որոնց թվում նաև «Այլասերումն կամ ինք-
նածնություն» (1901 № 11), «Տարվինականություն» (1902, № №
2, 3, 4, 5) և «Ծագումն մարդոց» (1902, № № 9—10, 11):

Վենական բնագիտաների աշխատություններում մենք չենք
տեսնում գոենիկ մաղձու որակումներ, վիրավորական հայտա-
րարություններ Դարվինի հասցեին, դարվինիզմի նկատմամբ:
Միիթարյան վանականները Դարվինի ուսմունքին մոտենում են
լուրջ, չեն թաքցնում դարվինիզմի խոշոր նշանակությունը, կա-
տարած դերը, միաժամանակ նրանք հարկավ քննադատում են
դարվինիզմը, ենելով իդեալիստական դիրքերից: Այսպես, Սի-
րունյանն ասում է: «Դարվինիզմը—արդի դարում կարևոր խըն-
դիրներեն մին համարված է»: Միիթարյանների քննադատու-
թյունը հանգում է այն եղանակացության, որ «տարվինականու-
թյուն կամ հեղաշրջանաց վարդապետությունը ոչ թե հաստատ-
ված և ապացուցված իրողություն մ'է, այլ ենթագրություն»
(Սիրունյան): Համոզիչ չհամարելով դարվինիզմի պատճառարա-
նությունները վսփոխականության մասին, նրանք բերում են
միամիտ փասուեր, ինչպես, օրինակ՝ ձիու մասին, որը Սիրունյա-
նի ասելով՝ համաձայն պեղումների՝ հաղարավոր տարիներ մնա-
ցել է անփոփոխ: Այսպես է նա դատում: «Հոգի և Վիրագիլիոս
իրարմեն հեռու ժամանակավ, մեզմե դարերով առաջ, նույն կեր-
պով կնկարագրեն զձին, և մենք ալ հիմա դայն նույնպես կտես-

նենք»։ Հենց Սիրունյանի ժամանակ գտնված էին մի քանի տասնյակ հազարավոր տարիների հնություն ունեցող ձիու միջանցիկ ձևերի ըրածոներ։

Բոլորն էլ եթե չեն ժխտում փոփոխականությունը, ապա այդ պատճառաբանում են Կյուլիերի կատաստրոֆների թեորիայով բայց բոլորովին սխալվում են, երբ Կյուլիերին վերագրում են աստվածային կրկնակի ստեղծագործության կարծիքը։

Ի՞նչ հարցեր են շոշափել միթթարյան մեկնարանները՝ թվենք մի քանիսը. կյանքի ծագումը, այս հարցի պատմականակնարկն սկսած Արիստոտելից, պայքարը ինքնածնունդի հարցի շուրջը, Պաստյորի աշխատանքը, գերը, կյանքի ծագման թեուրիաները, օրգաննական նյութերի սինթեզը և այլն։ Դարվինիզմի ուսմունքի կապակցությամբ նրանք խոսել են մի շարք նախադարվինյան գիտնականների մասին—Ռոբրիների, Լայընիցինամարկի, Սենտ-Լիերի, տպա նաև, Սիրունյանի արտահայտությամբ՝ «մոլեուլանդ դարվինիստներ» Հեկկելի, Հյոքսլի, Ֆոլստի, Բյուլիների և ուրիշների մասին։ Նրանք մանրամասն բնութագրում են դարվինիզմի հիմնական դրույթները՝ գոյության կոիվընական և արհեստական ընտրություն, բազմաթիվ փաստերով խոսում են, մանավանդ երեմյանը և Սարյանը, Էվոլյուցիայի ապացույցների մասին, փաստեր բերելով այն գիտական պաշարից, որոնց վրա հիմնվում է ամեն մի դարվինիստ։ Փաստերը՝ վերաբերում են և՛ համեմատական անառոմիային, և՛ սաղմնաբանության, և՛ պալեոնտոլոգիային, չեն թաքցնում նաև դարվինիզմի ցայտուն փաստարկութերը—ուսուդիմենտար և ատալիստական երեսույթների վերաբերյալ, մանավանդ մարդու ծագման հարցում, բավական մանրամասն խոսում են մարդու ծագման մասին։ Միթթարյանների շարադրանքը դարվինիզմի այս կամ այն պրոբլեմի մասին, սակայն, իր բովանդակությամբ ավելի հիմնավոր ու համոզիչ է, քան նրանց մակերեսային միամիտ քըննադատականը։

Բերենք մի քանի օրինակներ։

Սիրունյանը գրում է Ֆոխտի մասին. «Այս կապկասեր մեծարվինական քարոզիչը մարդը, օրանկութանը և մյուս բարձրդասու կապիկները հորեղբրորդի անվանելով կհամբոււկեր»։ Թեև նա գժգոնում է Հեկկելից այն բանի համար, որ նա խոսում է մարդու և կապիկների մոտ ազգակցության և նրանց միջև երբեմնի գոյություն ունեցող միջանցիկ ձևի մասին, բայց

միենույն ժամանակ նրանից ընթերցողն իմանում է, որ «Հեկ-կել սովորական փախստյամբ մը դմեղ կապահովցըն»՝ որ այս-պիսի տեսակ մը գոյություն ունեցեր է երկրաբանական նախ-նական շրջանաց մեջ և հիմա անհետացեր է» (էջ 232): Ուն-ուրիշ դեռությունիկ ճոռուժաքան տարվենականների մասին ասում է, որ մարդու նախանորը որոնում է ոչ այժմյան, այլ նախնա-կան մարդանման կապիկների մեջ: Մինիթարյան մեկնաբաննե-րը խոսում են բավական մանրամասն նաև բիոգենետիկ օրենքի մասին:

Երեմյանը՝ զգալով Հեկկելի ձեակերպած բիոգենետիկ օրեն-քի լուրջ լինելը՝ նշում է, որ «Տարվինականաց այս փաստն որ-չափ պարզ և համոզիչ է երեխի, սակայն հարկն է ըսել որ շատ խորամանել է»:¹

Երեմյանն այսպես է շարադրում մարդու կհնդանական ծագման մասին զարվինիստների սաղմնաբանական պատճառաբա-նությունները:

«Բայ արդի ծանոթության մարդկային սաղմն vesticola blastodermica (blastula ըստ Հեկկելի) վիճակեն, հորուս կերպե տասներորդ կամ երկուտասաններորդ օրն, ուղղակի կանցնի, ի կերպարանս ողնավորաց շուր մը ձեացընելով նախնական խորը, որ հնգետասաններորդ օրն կփակիլի, ցուցընելով ողնահարական առանցքի նախատարերքը: Այսու մարդկային սաղմն կանցնի փութով այլ ամենայն վիճակներին՝ զորս կհամարին տարվի-նականք իրը փաստք սերընդոյան ի ստորնագոյն կենդանյաց առ ողնավորաց:»²

Նույն հարցի մասին Սիրունյանը գրում է. «Այս օրինաց զորությամբ մարդկային սաղմը կանցնի մոների, մոռուլայի, ըլաստուլայի աստիճաններն՝ գաստրուլայի, որդո, պարուտակի, ակրանիո, ձկան, դերնո և վերջապես ստնավորի աստիճաննե-րուն, զգենլու համար միշտ ավելի հատուկ կերպով զանազան կարգաց հատկանիշները մինչև մարդկային տեսակը»:³

Բերելով հիշյալ հատվածը՝ միաժամանակ նա նշում է բիո-

¹ Հ. Ա. Նեմյան, Բառկերք գործնական գիտությանց, Վենետիկ, 1900 թ.

էջ 289:

² Նույն աեղում, էջ 289:

³ Միրունյան Ա. Էդուարդ, Միջին ընթացք իմաստասիրության, Վենե-տիկ, 1899, էջ 236:

գենետիկ օրենքի հակասական կողմերը, որոնք թեև չեն հեր-
քում բիոգենետիկ օրենքը, բայց հետագայում խռապես լուրջ
ուշադրության առնվեցին դարվինիստների կողմից և կարիք
եղավ օրենքի սկզբնական ձևակերպումը հնիթարկել որոշ լրացման:

Համաձայն բիոգենետիկ օրենքի սկզբնական ձևակերպման,
ինչպես նշում է Սիրունյանը՝ «պետք է սպասենք տեսնելու հա-
մար նախորդ տեսակաց հատկանիշներուն երենալը մարդկանց
սիփական եղող հատկանիշներն առաջ...» «Մինչդեռ,—ասում է
նա, —ընդհակառակին, մարդու ակռաները, ոտքը՝ մարդկային ձև
ունին ծննդենե ի վեր՝ և նույնիսկ հասաջ քան զծնունդն, և
անպամոց համեմատությունք այն ժամանակեն ի վեր մարդ-
կային հնաւ։¹

Երեմյանը մի ուրիշ փաստ է նշում. «Սաղմանաբույն մզանք
և աղեփոր՝ մարդկային սաղմին երկու շրջապատքն են՝ որ երե-
վան կուղան երրորդ շարթուն սկիզբը և որովհետեւ այս շրջա-
պատք դեռուններն սկսյալ հաջորդաբար ողնավորաց մեջ
կպանվեն, հետևաբար այս շրջապատքից միջոց մարդկային սաղմն
ևս պիտի մտնե ի վիճակ զեռնոց; Բայց աստ կպահանջմի միան-
գամայն զեռնոց սեփական մյուս գործարանաց ժամանակակից
զարգացումն, որ կպակաի, վասն զի այն ժամանակ դեռևս սիրտն
է երկխորշային (diloculaire), կամ ձկնային, և սաղմն կմնա ի վի-
ճակի ձկան մինչև չչորրորդ շաբաթ, մինչև որ այն նշանափոր
խոկային նախասկիզբն (archi-bronchial) կոչվածները զգենո,
որոց վրա ալ շատ ըսելիք կան. Ուրեմն զեռնոց հատուկ սաղմ-
նային շրջապատք՝ ձկանց հատկանիշներն առաջ երեան կու-
դան, մինչդեռ հակառակը պետք էր ըլլայ, մանավանդ եթե չեկ-
քելին շինած ծննդաբերական նշանավոր ժառոյն ուշ զնենքը²

Այս չափազանց ուշագրավ հատվածը բավական ընդարձակ
է, Յմիսնի և ալանտոխիսի մասին այսպիսի զատողություն անել
կարող էր լավատեղյակ մնագետը երեմյանի հիմնական առար-
կումն նրանում է, որ եթե համաձայն դարվինիզմի օրդանիպմ-
ները հաջորդաբար են զարգացել ստորակարգից դեպք բարձրա-
կարգը, ապա՝ «պետք է սպասենք տեսնելու համար նախորդ տե-

¹ Սիրունյան Վ. էդաւարդ, Միջին ընթացք իմաստասկրության, Վենե-
տիկ, 1899, էջ 237.

² Հ. Ս. Երեմյան, Բառգիրք գործնական գիտությանց. Վենետիկ, 1900
էջ 289.

սակաց հատկանիշներուն երեսալը մարդկային հատուկ հատկանիշներն առաջ Այսինքն, մարդն պիտի ըլլանալի կտպիկ, ապա մարդ։¹

Երեմյանը նման ուրիշ փաստեր էլ է բերում։

Այս գիտողությունները ճիշտ են, սակայն նրանք չեն վերացնում բիոգենետիկ օրենքը՝ որին այնքան մեծ նշանակություն էր տալիս Դարվինը, որ խոսել էր սադմերի մոտ նրանց նախահայրերի հատկանիշների կրկնան օրինաչափության մասին, օրինաչափություն, որը և հիմք է ծառայել բիոգենետիկ օրենքի համար։

Բիոգենետիկ օրենքը մշակել էին Հեկկելը, Մյուլերը. ոկզբնական ձևակերպումն, անշուշտ, ունիր թերություններ։ Մի շաք գիտնականների գիտական ուսումնակրությունները լրացըին, շակեցին օրենքն այն իժամատով, որ չի կարելի այն ամենը, ինչ որ հանդս է դալիս սաղմնային վիճակում, համարել նախառորդց ժառանգած, և սաղմնային բոլոր սատղիաներում էլ կարող են հանգես գալ էվոլուցիոն փոփոխություններ (այս դրույթը հետադարձ զարդարեց ուս գիտնական Սեւերցովը), սաղմն էլ հնթակա է գոյության կովի, բնական ընտրության, նրա վրա ևս կարող են առաջանալ հարմարվողական նոր գծեր։

Միթեարյան բնագետները խոսում են մարմնային այլանդակությունների, նրանց արտահայտությամբ «հեղավորությունների» մասին, որոնց մեջ լինում են և ատավիզմի երեվությներ, այսինքն՝ նախահայրերից ժառանգած հատկանիշներ, օրինակ մարդու պոչը, ավելորդ ստիճանները, ձիու ոտքի եռասմբակ լինելը և այլն։

Երեմյանը չի ժխտում եղած փաստերը, չի առարկում նաև դարվինիստների տված մեկնարանությանը, քանի որ ուրիշ կերպ դժվար է բացատրել, բայց միևնույն ժամանակ փորձում է այդ փաստերը հերքել այլ ճանապարհով։

Իհարկե, ամեն մի այլանդակություն ոչ մի լուրջ դարվինիստ չի մեկնարանում որպես ատավիզմ, օրինակ մարդու վեցամատություն և այլն։ Երեմյանը հակասություն է համարում դարվինիզմի համար այն, որ նա բոլոր այլանդակությունները չի մեկնարանում ատավիզմի տեսանկյունով, նա ասում է. «Ուրիմն դարվինականք ամենայն հրեշտավորությունքը չեն ուզեր փաստ առնուլ իրենց և կրավականան միայն իրենց գրության

¹ Երևան, Բաուգերը գործնական գիտություն, 1900, էջ 289։

նպաստավոր հրեշներով և արդեն միայն աստի կհասկցվի իրենց
բոլոր գրության տկարությունը և խարեռությունը»¹

Երեմյանը մանրամասն խոսում է և մարդու մոտավոր նա-
խանայրերի—կապկային բրածո ձևերի շուրջն առաջ եկած վեճք
մասին,

Պիտեկանթը զբուղուսի առթիվ գրում է. «Այս գյուտը ակըն-
թարժի մեջ աշխարհիս ամեն կողմը շրջան ըրափ: Վերջապես
մարդ կապիկն գտնված էր: Եվ ահա նա առասպելական շրջա-
նուց կելնելու գիտության կարգ կմտնեա»²

Սիրունյանն էլ այս առթիվ գրում է. «Հեկքել յուր հնաւ-
րած ցնորական նախատեսությանց մեջ ըսած էր, որ մարդուն
անմիջական նախորդը պետք էր գտնվիլ հարավային Ասիր մեջ»³,
... «այդ նախորդին ձեզ և անդամոց համեմատությունը կանխավ
ըսած էր, անունը կոչելով Ուղիկ կապկամարդ»⁴. Նա կասկածի
տակ է առնում այդ, բայց քիչ հնոտ չի ծածկում ընթերցողից
Դյուրուայի գյուտը Յավա կղղում, ապա և դրա շուրջն առաջ
եկած աղմուկը: Նա ասում է. «Մարդաբանք, երկրաբանք, հնէա-
բանք, մարդաբանականն ընկերությունը! Պերլինի, Փարիզու,
Փլորենտինո այս գյուտիս համար մասնավոր նիստեր ըըինք»⁵
Նա չի ժխտում այդ գյուտը, այնուամենայնիվ անհրաժեշտ է
գտնում այսպես առարկել. «Դեռևս ապացուցման կարոտ է կապ-
կանց և երևակայալ էակին, և ասոր՝ մարդու հետ ունեցած կա-
պակցությունը»⁶.

Ամենից շատ դարվինիզմի մասին արտահայտվել է Սարյա-
նը, որը, թեև որոշ գեպքերում թերի, լուսաբանել է նախադար-
վինյան էվլուցիոն հայացքները, օրինակ՝ Տուանըֆորի, Բոն-
նի, Դը-Մայեի, Ռոբինսի, որոնք, Սարյանի ասելով, «կհամա-
րեն, թե տեսակներն իրարու իրոք ինամի են և մերձավոր»
Բյուֆոնի մասին նա ասում է, որ՝ «ի սկզբան կպնդեր տեսակ-
ներու հասարակաց ծագումն ունենալը, բայց հետո ընդունելով
հանդերձ կենաց պայքարը և բնական ընտրությունը, տատամ-

¹ Երեմյան, Բառակիրք գործնական գիտությանց, Վենետիկ, 1900,
էջ 290.

² Նույն տեղում, էջ 292.

³ Սիրունյան, Մէջին ընթացք իմաստակրության, էջ 244.

⁴ Նույն տեղում, էջ 244.

⁵ Նույն տեղում, էջ 245.

⁶ Նույն տեղում, էջ 245.

սյալ վիճակի մեջ էր և կըսեր՝ թե տեսակն՝ ոչ անշարժ է և ոչ
ալ փոփոխական»:¹

Ճիշտ է, նա շատ մանրամասն է խոսում Դարվինի ուսու-
մունքի մասին, բավականաչափ ճիշտ վերլուծության է ենթար-
կում նրա զրույթները, սակայն ցուցաբերում է և որոշ անձը-
տություններ, Դարվինին սխալմամբ նմանեցնում է Լամարկին:
Հետաքրքրական է նրա մոտեցումը Կյուպիկեի կատաստրոֆների
թերթիային, որը «սխալմունք» է համարում. նա համաձայն չէ այն
մտքին, թե աստված ամեն կատաստրոֆայից հետո՝ «նորոգել է
ամրող ստեղծագործությունը միանգամայն»: Այս քննադատա-
կանն, ինարկե, արժեքափոր է, բայց Սարյանը սխալվում է,
երբ Կյուպիկեի աշակերտ Դ'Օրբինյեի կարծիքը կրկնակի ստեղծա-
գործությունների մասին վերագրում է Կյուպիկեին:

Սարյանը այսպիս է արժեքավորում դարվինիզմի նշանա-
կությունը. «Տարվինականությունն, — ասում է նա, — անթիվ գյու-
տերու պաճառ եղավ, անով սկսան իրողությունները բացա-
տրվիլ և իրարու հետ կապվել այնպես որ առանց անոր նույն
իրողություններն անմիաբան և աննշան վավերագիրք են»:²

Սարյանը թեև շատ անդիրում է աստծու անունը տալիս,
բայց նրա հիմնական մոտեցումը դարվինիզմին հաշտվողական
է, նա չի կարող միտել դարվինիզմի աված ունալ վաստերը, սա-
կայն ընտրում է միջին ճանապարհը: Օրգանիզմները, ճիշտ է,
գույգ զույգ իրարից անկախ չեն ստեղծագործվել, այլ առաջա-
ցել են աստիճանաբար՝ նախ պարզ, հետո բարդ ձևերը: Եղել է
էվոլյուցիա, գործել է գոյության կոնկը, բնական ընտրությու-
նը, միայն ամենասկզբնական օրգանիզմները ստեղծել է արա-
րիչը. մարդն էլ ունի աստվածային ծագում:

Իր առաջին տեսակետը նա հակասական չի համարում
դարվինիզմին: Այսպես, Դարվինի «Ծեսակների ծագում» գրքի
մասին գրում է. «Եվ այս զիրքն ամրողջապես մեկ քանի պարբ
առաջարկություններու կվերածվի, այսինքն, բոլոր կենդանի
էակներն առաջ եկած են երեք կամ չորս աստվածաստեղծ, որ է
Աստուծմե ստեղծված նախատիպերեա»:³

Այս մեկնաբանությունը բոլորվին սխալ է: Ճիշտ է, Դար-
վինի զրույթ հանդիպում է և աստծու անունը, բայց դա պա-

1 Հ. Ա. Սարյան, Տարվինականություն. «Բազմավեպ», 1902, № 2, էջ 66.

2 Նույն անդում, էջ 68:

3 Նույն անդում, էջ 67.

տահական կցորդ է, Դարվինն առաջին օրգանիզմների ծագումը երբեք չի վերագրել արարջին, Այդ հարցի մասին Դարվինը հարմար է համարել ամենին չխոսել, քանի որ հարցը չէր ուսումնասիրել և ավյալներ չկային իր ժամանակ:

Ինչպես տեսնում ենք, միիթարյան բնագետների աշխատությունները դարվինիզմի մասին արժեքավոր են և ունեցել են ժամանակին մեծ նշանակություն այն տեսակետից, որ ընթերցողը բավականաչափ ընդարձակ ծանոթացել է դարվինիզմի դրույթներին: Դարվինիզմի ինդիրները լուսաբանվել են այնքան մանրամատսն և բաղմաթիվ ցայտուն փաստարկումներով, որ ավելի համոզիչ էր դարվինիզմի ուսմունքը, քան այդ ուսմունքի նրանց տված քննադատությունը: Երեմյանը և Սարյանը մեր անցյալի այն եղակի դեմքերից են, որոնք թեև կրոնավոր էին, բայց միաժամանակ բնագետ լինելով, շատ բարձր են գնահատել բնագիտությունը և հատկապես բիոլոգիան: Որպես մասնագետ բնագետներ դարվինիզմը բացարձակապես հերքել չկարողանալով՝ նրանք աշխատել են այդ ուսմունքը հարմարեցնել իդեալիստական աշխարհայացքին, կրոնը հաշտեցնել գիտության հետ: Բայց դա նրանց չի հաջողվել, քանի որ պատճառաբանությունները հիմնված չէին փաստական տվյալների վրա: Միիթարյաններն ուսումնասիրած փաստերի ճնշման տակ, որպես բնագետներ, չեն կարողացել խեղաթյուրել ռեալ փաստերը, անաշառ նկարագրել են դարվինիզմը հաստատող բաղմաթիվ փաստական ապացույցները, հարկավ փորձել են միաժամանակ և հերքել որոշ գրույթները, բայց այդ ամենը արվել է միամիտ ձեվով և ոչ համոզիչ: Հաճախ աստծու անունը տալը, կամ դարվինիզմը ենթադրություն համարելը՝ չէին կարող հերքել նկարագրած բազմաթիվ այն փաստերը, որոնք պարզ հաստատում էին դարվինիզմի հիմնական սկզբունքները:

Փաստերը նշում են, որ 19-րդ դարի վերջերին միիթարյանների յուրահատուկ էվոլուցիոնիզմը, բնագիտության տված նրանց բարձր գնահատականը, բնագիտական գիտելիքներ տարածելու ջանքերը հինավուրց արագիցիա էր հայ վանական գիտնականների համար: Դեռ հին դարերում, միջնադարում հայ վանական գիտնականներն զբաղվել են նաև բնագիտական խընդիրներով, ինչպես, օրինակ, Անանիա Շիրակացին, Որոտնեցին, Տաթևացին և ուրիշները: Այդ գիտական արագիցիան մենք տեսնում ենք վենետիկյան բնագետների մոտ: Միիթարյան բնա-

գետների նշանակությունը բնորոշելու համար անհրաժեշտ է կանգ առնել մի շատ ուշադրավ վավերագրի վրա: Մենք արդեն ասացինք, որ 1843 թ. «Բազմավիճակ» համարյա յուրաքանչյուր համարում տեղ էր տալիս բնագիտության հարցերին, հատկապես կենդանաբանությանը:

1844 թ. խմբագրական հառաջարանում առվում է հետեւ վյալը. «Մարդ մը իր աղդին լուսավորությանն ու հառաջադիմությանը համար աշխատելի ավելի գեղեցիկ ու վսեծ ինչ դըմավարություն կրնա ըլլալ. այս դժվարության հասնելու համար էլ ուրիշ ինչ հարմար միջոց կրնա ըլլալ բայց եթե ընտանի և փոփոխական ու դվարճակի ուժով մը ոչ միայն դյուրիմաց բաները սորվեցնել չգիտցողին, հապա նաև բարակ ու խորունկ գիտելիքները մանրացույցով կամ դիտակով ցուցնելու մը պետպարզել մեկնել, և ամենուն հասկացնելու բաներ ընկեր...»¹

Միիթարյանների գործունեության այդ ժամանակաշրջանը համընկնում էր Իտալիայում կատարվող սոցիալական իրադարձություններին՝ կապված իտալացիների ազատագրական շարժման հետ:

Առաջապեմ դեմոկրատական հովերը չէին կարող չանդրադառնաւ նաև նաև Վենետիկի միսիթարյանների վրա: Բարձր գնահատելով գիտությունն ընդհանրապես և բնագիտությունն առանձնապես, նրանք զգացին նրա արժեքը հայերի կուլտուրական զարգացման համար: Այդ շրջանում «Բազմավիճակ»-ի 1844 թ. № 1—2-ում տպագրվում է մի անստորագիր ընդարձակ աշխատություն «Կենդանաբանական բաժանում» վերնագրով: Ակնարկում խոսվում է կենդանիների կլասիֆիկացիայի մասին ըստ Կյուվիեի: շարադրում է զրա նշանակության, կառուցման սկզբունքները: Դարվինիզմը զեռ հրապարակ չէր եկել, միրապետող գրույթները բնագիտության մեջ հակառակություն էին, իսկ կլասիֆիկացիան դեկապարզում էր լինելու և Կյուվիեի սկզբունքներով: Հոդվածագիրը ելում է Կյուվիեի կլասիֆիկացիայից, այսինքն՝ նշում է չորս հիմնական տիպերը, որ կազմվել են կենդանիների՝ ռապեկու կիրպին, և նրանց մարմնոյն կազմվածքին նայելով: Ժամանակի տիրապետող իզեալիստական մեկնաբանության համաձայն՝ կլասիֆիկացիայի միավորները դիտվում էին որպես իրարից

¹ «Բազմավիճակ», № 1, Վենետիկ, 1844 թ.

անկախ ստեղծագործությունների արդյունք, օրդանիզմների մեջ չէր ընդունվում և ոչ մի ազդակցական կապ, իսկ կառուցվածքային նմանությունները նկատվում էին որպես նախամտածված պլանի արտահայտություն:

Միաժամանակ առկա էին նաև էվոլուցիոն տեսակերները, ինչպես Լամարկի, Սենտ-Իլերի, որոնք ընդունում էին կենդանիների ազդակցական կապը, բայց դրանք եղակի և երբեմն էլ իրեալիստական գունագործում ունեցող տեսություններ էին, եվ ահա այդ ժամանակաշրջանում միմիթարյան ընազեանները ավլյալ հարցի մասին, չնայած իրենց վանական լինելու հանդամանքներին, արտահայտվում են բավական համարձակ և բոլորովին հակառակ ընդունված, տիրապեսող տեսուկետի: Թերենք այդ հատվածը. «կենդանիների ազգը կրաժանվի դաս, կարգ, ցեղ և տեսակ, որպեսողի ամեն մեկ կենդանին ինչ մասնավոր հատկություններ որ ունի՝ որոշ իմացվի. վասնզի աս հատկություններն ուրիշ կերպով չենք կրնար դյուրավ ընթանել, բայց եթե ամեն մեկ խուժը զանազան ցեղեր բաժանելով: Որևէից կենդանվոր մը հատկությունները քննելով կրնանք իմանալ, թե որ կարգին կամ ցեղին տակը կերթա, և ան ալ կրնանք զյուրավ բացատրել իրեն բնությունն և հատկությունները: Զարսանալին սա է, որ բալոր կենդանյաց ազգը մեկ տեղ առնելով կտնենենք, որ ամենքն ալ մեկ ոկիզք մը առաջ եկած իրարու. հետ կտպակցությաւն ունեն: Ուստի բնական պատմությունը գործիավոր մարմաց ու հանքաց վրա կխոսի, իսկ կենդանաբանությունը կը սորվեցնե, թե միայն բոլոր կենդանիները առնելով ինչ կապակցությաւն ունեն: Անտեսու, և թե կենդանյաց ներսի ու դրսի հատկություններն ինչքան կտարբերվեն իրարմե: Ասկե կը նետեի, թե երբոր անձանոթ կենդանու մը մեկ ոսկորը գտնենք, աս ուսմունքով կրնանք իմանալ, թե այն կենդանին ինչ տեսակ է. և անդամադննական օրենքներով ալ կրնանք որոշել, թե ինչ մեծություն և հատկություն ունեցած պիտի ըլլառ:¹ (Բնդգծությունները մերն են—Ռ. Գ.):

Այս հատվածից շատ պարզ երևում է, որ միմիթարյան անհայտ բնագետը կլասիֆիկացիայի վրա նայում է ոչ թե ժամանակակից տիրապետող հակաէվոլուցիոն տեսանկյունով, այլ բացահայտ էվոլուցիոնիստի գիրքերից ենելով:

Հիննեն, Կյուվիեն մեծ գործ են կատարել կլասիֆիկա-

¹ «Բազմավեպ», 1844 № 1—3, էջ 36:

ցիայի կառուցման գործում, բայց դրանցից և ոչ մեկը չի շեշտել կենդանիների անատոմիական նմանությունից բխող ազգակցության փաստը, օրգանիզմների և մեկ սկիզբը մը առաջ եկած, իրարու հետ կապակցությունը ունենալը: Լիննեն օրգանիզմները համարում էր զույգ-զույգ անկախ ստեղծագործության արդյունք, կյուրվիեն, ճիշտ է, սահմանում է 4 հիմնական տիպեր, որոնց մեջ հավաքում է (որոշ տիպերում անհաջող) ընդհանուր դժբով նման ձևեր, սակայն նա չի շեշտում ոչ տիպերի միջև եղած ազգակցական կապը և ոչ էլ յուրաքանչյուր տիպի սահմանում եղած ձևերի ազգակցությունը, այլ կերպ ասած՝ երկուսն էլ կանգնած են հակաէվոլյուցիոն տեսակետի վրա:

Մխիթարյան բնագետի մեկնությունը մոտենում է Էվլուցիոն ուսմունքի այն հիմնական դրույթին, որ վերջնականապես հաստատվեց միայն 15 տարի հետո, Դարվինի «Տեսակների ծագումը» աշխատության լույս տեսնելու օրից:

Ինչպես տեսնում ենք, էվլուցիոն գաղափարի արագիցիան ները մխիթարյան բնագետների մոտ ավելի արժատական արտահայտությամբ սկսում են դեռ 19-րդ դարի կեսերից, դարվինիզմից առաջ, այնպիսի ժամանակի, երբ բնագետների մեջ գերակշռում էր իդեալիստական մեկնաբանությունը, իսկ եվրոպական խավարամիտ կրոնավորները բացարձակապես պաշտպանում էին միամիտական կրոնաւիդեալիստական տեսակետը: Մխիթարյան բնագետների գործունեության երկրորդ էտապում՝ 19-րդ դարի վերջերին դարվինիզմի մասին ավելի ընդարձակ և փաստալից աշխատություններ լույս տեսան, բայց զբանք էվլուցիայի նկատմամբ հաշտվողական, քողարկված մոտեցում էին հանդիս բնութագործում, որն անշուշտ ունի խորը սոցիալական արժամատներ: Ավելի բացարձակ արտահայտություն, այն էլ կրոնավորների կողմից՝ չեր կարելի սպասել, բայց լուրջ բնագիտական կրթություն ունեցող և անցյալի գիտական արագիցիաներին հետևող մխիթարյան բնագետները չեին կարող Ժխտել դարվինիզմի հոյակապ նշանակությունը: Այսադեմ էր միայն մի բան՝ համաձայնեցնել այդ ուսմունքը նոր ժամանակին: Այսպիս էլ արեն 19-րդ դարի վերջին քառորդի յուրահատուկ էվլուցիոնիստ մխիթարյան բնագետները:

ВЕНЕЦИАНСКИЕ МХИТАРИСТЫ И ДАРВИНИЗМ

Труд Чарльза Дарвина «Происхождение видов» вызвал в XIX веке огромный переворот в естествознании, в частности в биологии, после чего окончательно утвердился в науке эволюционный взгляд на развитие органического мира.

Армянская литература также отозвалась на учение Дарвина. Было опубликовано немало очерков, статей и критических заметок, посвященных теории Дарвина и проблемам, связанным с дарвинизмом. Труды эти весьма способствовали распространению и пропаганде идей дарвинизма в армянской среде. Особенно пространно о дарвинизме высказывались венцианские мхитаристы—Бремян, Сарян и Сируни, труды которых печатались в органе «Базмавен», в однотомнике «Научной энциклопедии», в трактате по философии и др. Не отрицая значения учения Дарвина, мхитаристы критиковали эту теорию с идеалистических позиций, стараясь примирить дарвинизм с религией. При всей необоснованности такой критики труды мхитаристов приносили много пользы, так как армянский читатель довольно подробно знакомился по ним с сущностью учения Дарвина, и, вопреки намерениям авторов, легко убеждался в правильности научных доводов дарвинизма.

Автор указывает, что своеобразный эволюционизм у мхитаристов выявился еще в 1844 году, когда в журнале «Базмавен» (№ 1) в очерке «О подразделении животных» была высказана мысль о биологическом родстве животных и их происхождении от некоего общего предка.

Таким образом биологические произведения венцианских мхитаристов, несмотря на их критический характер, способствовали распространению идей дарвинизма в армянской среде.